

տութիւն մը, մանաւանդ կեանքի հարստութիւն մըն է երբ անդորր ալ ըլլայ :

Վաճառականութեան մէջ նկատելի սկիզբներէն մին ալ է՝ կենալ իր վարժուած շրջավայրին մէջ և փորձառութեամբ աշխատիլ մենագրադ ի՛ր գործին միայն և անկէ ըմբռնել երբեմն բաղժն ալ, որ կը լեցունէ ի դէպ ժամուն շահ և զէնի թերոյթները՝ « փոխ տալով շատ բան, այլ պարգեւելով և ո՛չ ինչ » ըստ հին առածին : Աւելի ձեռներէցներու համար լաւ է գաղթականութիւնը՝ փոքր կեդրոններէն դէպի մեծ կեդրոն :

Դարձեալ՝ սկիզբէն մեծ վաճառականութեան զբաղիլն ու մեծ դրամագլուխներու հետ խաղալն աղէկ վախճաններ ունեցած չեն :

Խելքն ու ճարտարութիւնը՝ փոքր դրամագլուխներով լաւագոյն գործեր դարձունելուն և շահելուն մէջն է. փոքր ու նեղ առևտուրներու մէջ փոքր հասակէ վարժուողները՝ փոքր դրամագլուխով անգամ կըրցած են շարունակել տեւել ու մեծնալ աստիճանաբար՝ աշխատութեան փորձառութեան և լրջութեան ամուր հիմերուն վրայ հաստատուած :

Այսօրուան Կ. Պոլիսի բիացային վրայ շատ են աւոնք՝ որ մանրավաճառութեամբ արշընճիութեամբ սկսած՝ եղած են մեծկակ դիրքերու տէր, ու կը տեւեն աւելի ապահովութեամբ այդ դիրքերուն մէջ քան ի սկզբանէ բաղժէն նպաստաւորեալներն ու ժառանգաւորեալները : Եւ առ է՝ գործն իր այբբէնգիմէն սկսիլը : Պէտք է նաև տարւառի ընթացքին մէջ՝ ընդունել սա մարդասիրական ու գործնական սկիզբը թէ իրաւապէս ու անկեղծութեամբ հաշիւի առնելու է միշտ գնորդի՛ն ալ օգուտը, և հոս է մեծ գաղտնիքը վաճառողի՛ն ալ օգուտին :